

ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Արդեն ճվիրական ու ավանդական դարձած մեռոնօրհնեքի սրբազան արարողությունը ահավասիկ 1700 տարիներից ի վեր բովանդակ հայության միասնական աղոթքի ու հոգևոր ուխտի նորոգման խորհուրդն է դարձել: Մեռոնօրհնությունը հայ հավատացյալ ժողովրդի հոգու և սրտի ամենամոտ ազգային-եկեղեցական տոնախմբությունն է, որին ներկա է եղել մեր ժողովուրդը հոգեկան ուրախության հույզերով և ազգային հպարտության զգացումներով:

Առաջին անգամ այս սրբազան հողի վրա, հավանաբար 303 թ., Ս. Գրիգոր Լուսավորիչն է, որ օրհնել է սրբալույս մեռոնը Արշակունի Տրդատ Գ հայոց արքայի կնքահայրությամբ: Այնուհետև դարերի ընթացքում Ս. Լուսավորչի արժանավոր հաջորդները միշտ օրհնել են սուրբ մեռոնը, որպեսզի երբեք ու երբեք Հայ Եկեղեցում և հայ հոգիների մեջ «չցամաքի ձեթը մաքուր իր կանթեղին, հոգիներին՝ սրբազան հուր»:

Ահավասիկ այս հանդիսավոր առիթով Մայր Հայրենիքը իր դռները բացեց բազմահազար հավատավոր հայորդիների առջև: Եվ ահա այսօր էլ հայ ուխտավորներն աշխարհի բոլոր կողմերից եկել են Ս. Էջմիածին, Մայր Հայրենիք՝ իրենց հետ բերելով բյուր կարոտներ, կրոնական ու հայրենասիրական հույզ ու ապրում:

Աշխարհի տարբեր երկրներից ուխտավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածին են ժամանում Հայաստանյայց Եկեղեցու թեմական առաջնորդներ, հոգևոր ներկայացուցիչներ, թեմական և եկեղեցական վարչության անդամներ, Մայր Աթոռի բարերարներ, ազգային-հասարակական գործիչներ, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ և այլ հյուրեր: Նրանք գալիս էին հաղորդակից լինելու մեռոնաբույր Ս. Էջմիածնով մեր նախնիների սուրբ հոգիների հետ, գալիս էին տեսնելու Հայաստանի ինքնիշխան հանրապետության վերածնունդը և միասնաբար աղոթելու մեր Եկեղեցու և Մայր Հայաստանի շինության ու անսասանության համար:

Ս. Էջմիածինը իր պանդուխտ զավակներին կանչել է իր հովանու ներքո, իր մայրական գորովագութ գիրկը՝ իր մեռոնաբույր օրհնությունն ու աղոթքը բաշխելու համասիրուն հայությանը:

1991 թ. սեպտեմբերի 21-ից մինչև 25-ը սրբալույս մեռոնօրհնության համազգային հաղորդությանը մասնակցելու համար Մայր Աթոռ Ս. Էջմիածին են ժամանում Երուսաղեմի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը՝ ընկերակցությամբ Տ. Սեսակ եպս. Դարիպյանի, Կ. Պոլսո հայոց Պատրիարք Տ. Գարեգին արքեպս. Գազանճյանը՝ ուղեկցությամբ Տ. Շահան եպս. Սվաճյանի, Տ. Մանվել վրդ. Երկաթյանի և Տ. Պարույր քհն. Դամատյանի։ Մեռոնօրհնելիք իրենց մասնակցությունն էին բերել նաև ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ եպս. Պարսամյանը, ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վահե արքեպս. Հովսեփյանը, Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպս. Չիճչիճյանը, Հունաստանի հայոց թեմի հայրապետական պատվիրակ Տ. Ոսկան եպս. Գալֆաքյանը, Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Սվազ եպս. Սասսունյանը, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեղան եպս. Պալիոզյանը, Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան եպս. Տերտերյանը, Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գիսակ եպս. Մուրադյանը, Ուրուգվայի հայոց թեմի առաջնորդ Տ. Հակոբ եպս. Գլըճճյանը, Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տաթև եպս. Մուրատյանը, Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ և հայրապետական պատվիրակ Տ. Գյուտ արքեպս. Նազաշյանը, Լիոնի հայոց առաջնորդ Տ. Նորվան եպս. Զաքարյանը, Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ եպս. Գրիգորյանը։

Ներքին թեմերից հաղորդությունների մասնակցում էին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս եպս. Բուճիաթյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Արսեն եպս. Բեբրեկյանը, Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Սամվել եպս. Արիստակեսյանը, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանը, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրան եպս. Կյուրեղյանը, Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սաճթուրյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Ս. Հռիփսիմե վանքի վանահայր Տ. Սմբատ եպս. Սրաբաշյանը։

Հրավիրյալների թվում էին՝ Երուսաղեմից՝ Տ. Թարեհ արքեպս. Սեմեյանը, Թվեցարիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Վիգեն ծ. վրդ. Այվազյանը, Իտալիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Սարգիս քհն. Սարգիսյանը, ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմից Տ. Արիս եպս. Թիրվանյանը, Տ. Հայկազուն ծ. վրդ. Մելքոնյանը, Գ. Գրիգոր քհն. Հայրապետյանը։

Սմեռնյան Հայոց Հայրապետի մասնավոր հրավերով մեռոնօրհնության արքազան արարողությանը մասնակցելու համար Մայր Աթոռ էր ժամանել Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսը՝ ընկերակցությամբ Տ. Սեսպուհ ծ. վրդ. Սարգիսյանի և Տ. Արշավիր վրդ. Գաթուջյանի։

Հաղորդությանը մասնակցող քույր Եկեղեցիների պատվիրակության մաս էին կազմում Ռուսաց Եկեղեցու, Վրաց Եկեղեցու և Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչները։

ԿԻՐԱԿՆԱՄՈՒՏԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Սեպտեմբերի 28-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 18-ին, Հայ Եկեղեցու ճվիրապետական Աթոռների գահակալները, եպիսկոպոսաց դասը, վարդապետներն ու քահանա հայրերը, Հայոց Հայրապետի գլխավորությամբ, եկեղեցական թափորով, ուխտավորների ու հավատացյալների խուռներամ բազմությամբ առաջնորդվեցին Մայր տաճար՝ ներկա լինելու կիրակնամուտի հանդիսավոր ժամերգությանը։

ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 29-ին, կիրակի։ Այսօր Ամենայն Հայոց Հայրապետը մեծաշուք հանդիսավորությամբ, իր գահակալության 36-րդ տարում, վեցերորդ անգամ կատարում է սրբալույս մեռոնի օրհնությունը՝ ի վայելումն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հավատավոր հայ ժողովրդի։

Քառասուն օրեր առաջ Մայր Աթոռում սկսվել էր սրբալույս մեռոնի պատրաստությունը։ Մեռոնի արծաթաձույլ մեծ կաթսան, լցված ձիթապտղի անարատ յուղով, դրվել էր Ավագ խորանում ամենօրյա «աղօթիք և երգօք հոգևորօք» և ծածկվել «յոթն շղարշով»։

Վաղ առավոտից հազարավոր հայ ուխտավորներ և հավատացյալներ արտերկրից և Հայաստանի տարբեր շրջաններից եկել են մասնակցելու համազգային այս արտաքույզ ու գեղեցիկ արարողությանը։

Մինչև մեռոնօրհնեքի արարողությունը, առավոտյան ժամը 10-ին, Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին արքեպս. Գազանճյանը։

Ս. պատարագի արարողությունից հետո եկեղեցական մեծահանդես թափորը, սկիզբ առնելով Վեհարանից, ձգվում է դեպի Մայր տաճարի առաջ պատրաստված բեմը։

Քահանայապետական լրիվ զգեստավորման մեջ եկեղեցական թափորը գլխավորում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ շրջապատված Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսով, Տ. Թորգոմ և Տ. Գարեգին Սրբազան Պատրիարքներով, որոնք տոնական և հանդիսավոր զգեստավորված են իրենց դիրքի և պաշտոնի համաձայն, ինչպես նաև 12 եպիսկոպոսներով ու արքեպիսկոպոսներով, որոնք մասնակցելու են սուրբ մեռոնի օրհնությանը։

Թափորի առջևից ընթանում են կարմրազգեստ, ջրապինդ երկու շաթիրները՝ արծաթագլուխ գավազաններով։ Նրանց հետևում են ջահակիրները, որից հետո գալիս են հոգևոր ճեմարանի ուսանողները, շուրջառազգեստ վարդապետներն ու քահանա հայրերը։ Թափորի կենտրոնում երկու վարդապետներ կրում են խաչվառն ու հայրապետական գավազանը, իսկ երկու սարկավագներ՝ ս. մեռոնի կաթսայի ոսկեթել երիզներով բռնված սպիտակաթույր շղարշը։ Նրանց հետևում է սրբալույս մեռոնի օրհնության կնքահայրը՝ Գևորգ Հովհաննյանը (Նյու Ջըրզի)։

Ծքեղազգեստ առաջանում է 12 արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների շքախումբը՝ մատուցքներով, արծաթապատ Ավետարաններով և այլ սրբություններով, Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսը այս ճվիրական հանդիսության առիթով կրում է Կիլիկյան Աթոռից բերված մեռո-

նով լի սափորը, Ամենապատիվ Տ Թորգոմ Պատրիարքը տանում է աստվածամուխ Ս. Գեղարդը, Ամենապատիվ Տ. Գարեգին Պատրիարքը՝ Ս. Կենաց փայտը, Ներսես արքեպս. Պոզապալյանը՝ Լուսավորչի Ս. Աջը, Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը՝ անուշաբույր ծաղիկներով անոթը, Տ. Գրիգորիս եպս. Բունիաթյանը՝ բալասանով անոթը, Տ. Խաժակ եպս. Պարսամյանը՝ հին մեռոնը, Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը՝ Ս. Արիստակես Հայրապետի աջը, Տ. Արսեն եպս. Բերբերյանը՝ Ս. Թադեոսի աջը, Գյուտ արքեպս. Նագաշյանը՝ Ս. Հակոբ Մծբնա Հայրապետի աջը, իսկ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը, Տ. Աղան եպս. Պալիոզյանը, Տ. Գիսակ եպս. Մուրադյանը տանում են արծաթապատ կազմերով Ս. Ավետարաններ:

Վեհափառ Հայրապետը հընթացս օրհնում է բազմահազար հավատացյալներին և ուխտավորներին, որոնք երկյուղածությամբ գլուխ են խոնարհում հայրապետական Ս. Աջի առաջ: Հայոց Հայրապետի աջ և ահյակ կողմերով քայլում են Տ. Ավագ եպս. Ասատուրյանը և Տ. Հովնան եպս. Տերտերյանը՝ որպես փեշակիրներ:

Հայրապետական թափորին մաս են կազմում քույր Եկեղեցիների պատգամավորները, որոնք տեղ են գրավում Հին Վեհարանի առջևում այս առթիվ պատրաստված մասնավոր բեմի վրա: Հարթակի վրա են գտնվում Հայաստանի խորհրդարանի նախագահ Տիար Լևոն Տեր-Պետրոսյանը և պաշտոնական այլ անձինք:

Բեմահարթակի աջակողմյան դասում կանգնած Մայրավանքի երգչախմբի անդամները, Մայր թոռի վարդապետների և սարկավագների հետ միասին, երգչախմբի ղեկավար Խորեն Մեյխանեջյանի գլխավորությամբ, կատարում են մեռոնօրհնության շարականներն ու մեղեդիները:

«Հրաշափառ Աստուած» շարականի վեհ հնչյունների ներքո, Տրդատյան կամարակապ դռան միջով, եկեղեցական հանդիսավոր թափորը, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, բարձրանում է զանգակատան առաջ պատրաստված բեմ-խորանի վրա՝ կատարելու սրբալույս մեռոնի օրհնությունը: Նույն պահին վեհ ու հաղթական թնդում է «Ուրախ լեր» շարականը, որ հոգեկան անպատում բերկրանքի ու խնդության հույզերով է համակում բոլորի սրտերը:

Արդարև այսօր ուրախ է Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, քանզի ամենուր լույս է, խունկ և աղոթք:

Հայոց Հայրապետը բազմում է «յաթոռ և երկոտասան եպիսկոպոսունք կալով շրջապատ առաջի, ունելով ի ձեռս իւրեանց զսուրբ նշանն Կենաց, զԱջ Սրբոյ Լուսաւորչին և զնշխարս սրբոց և մեռոնաշիշ մի լցեալ հին մեռոնաւ»:

Մեռոնօրհնեքի հոգեհույզ ու սրտահույզ արարողությունը ուղիղ եթերով ցուցադրվում էր հանրապետության հեռուստատեսությամբ:

Սկսվում է սրբալույս մեռոնի օրհնության մեծահանդես արարողությունը: Սրբազան եպիսկոպոսները «Կանոն օրհնութեան սրբալոյս մեռոնի» հրահանգի համաձայն Ս. Գրքից կատարում են համապատասխան հատվածների ընթերցումներ սուրբ յուղի պատրաստության հոգևոր, աստվածային նշանակության և նրա գործածության մասին: Այնուհետև Վեհափառ Հայրապետն ընթերցում է մեռոնօրհնեքի մեծ աղոթքը. «Արդ զօրութեամբ ամենասուրբ Հոգւոյդ եղիցի իւղս այս՝ իւղ ցնծութեան, զգեստ լուսաւորութեան, օծումն թագաւորութեան, սրբութիւն հոգւոց և մարմնոց, շնորհք հոգեւորական, պահապան կենաց, կնիք արդարութեան, զէն հաւատոյ, նահա-

ԱՆՍՄՈՄՈ ԺՈԺՈՒԳԵՍԻ ԴՈՒՌԶՈ ՎԴԱՀԱՎՍԵՌ ՈՇՎՍԼՈՎՅՈ
Ի ԽԴՎՍԵՓՎԱՌՇՈՅ ԺՈՒԺԳԴԱՎՍՊ ՎԵԺԻՍՆԱՔ ԼՈՇՇՈՏՈՒՈՇ



«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱՆԱԿԵՐՊԻՆ ԳԱՅՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ Է ՄԻԱՎՈՐՎԱԾ ԵՐԵՎԱՆՅԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ ՕԳՈՒՆՑ ՍԻՍԻԼԻԱՅԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՐԵՎԱՆՅԱՆՆԵՐԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՀԱՄԱՐ»

տակ հաղթող ընդդէմ ամենայն գործոց բանսարկուին, ոգւոց փրկութիւն, ցնծութիւն սրտից, ուրախութիւն յաւիտենական, զի որ ոք օծցի ի սմանէ՝ վերստին ծննդեան իւղովս, երկիւղաց լիցի յԱստուծոյ և աներկիւղ հակառակորդէն»: Ապա երգեցիկ խումբը մեղմորեն երգում է «Որ յառաջագոյն յօրէնս» մեռոնօրհնության սրտառուչ շարականը, «Մեղեդի մեռոնի՝ Հայր Ամենակալ» տաղն ու Ծնորհալու «Նոր օրհնութիւն» քարոզը: Ապա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը կարդում է մեռոնօրհնության երկրորդ և երրորդ մեծ աղոթքները: Այնուհետև «լինի բացումն դրան նիւթոյ մեռոնի». Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը հրավիրում է սուրբ մեռոնի կնքահորը՝ բաց անելու մեռոնի կաթսայի կափարիչը, և հենց այդ պահին էլ դպրաց խումբը ոգևորությամբ եղանակում է «Բացեր, Տէր, այսօր զգաւնձդ երկնային» շարականը: Կիլիկյան Աթոռի Գահակալը մոտենում է կաթսային և նրա մեջ լցնում Անթիլիասից բերված մեռոնը: Ապա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիսավորապես մեռոնօրհնության արծաթյա կաթսայի մեջ է թափում «զնիւթ ծաղկանցն և ապա զբալասանն, և զկնի զհին մեռոնն»: Այս խորհրդավոր պահը կատարվում է «Առաքելոյ աղաւնոյ» հոգեցունց շարականի երգեցողության ներքո: Եվ հենց նույն պահին էլ տոնական հնչում են Մայր տաճարի զանգակատան զանգերը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Կենաց Ս. Փայտով, Ս. Գեղարդով և Ս. Գրիգոր Լուսավորչի աջով երեք անգամ տեառնագրում և խառնում է նոր մեռոնը՝ երգելով. «Օրհնեսցի և սրբեսցի մեռոնս այս նշանաւ»: Մյուս սուրբ մասունքներով ևս տեառնագրվելուց հետո, կաթսան ծածկվում է կափարիչով, և Վեհափառ Հայրապետը կարդում է վերջին աղոթքը. «Արդ, այժմ և մեք պատրաստելով զսա որպես կաթն մատուցանեմք, զի ամենեքեան որ ի սմանէ առնուցուն՝ արժանի լիցին ընդունել զհաստատուն կերակուր, զճշմարիտն, զերկնայինն՝ ի շնորհաց միածնի քո Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...»:

«Եւ այժմ ծագեա ի սիրտս մեր զպարգևս բարութեան Հոգւոյդ Սրբոյ, և հաղորդակից երեւեցո զմեզ պարգևաց քոց սրբոց, վասն զի դու իսկ ես մեռոն անբիծ, և մաքուր և անուշոտ, որ հանապազ բուրես յանձինս սրբոց քոց»:

Ապա Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով ավարտվում է սրբալույս մեռոնի օրհնության համազգային հանդիսությունը:

Այս նվիրական արարողության ավարտին Ամենայն հայոց Հայրապետն իր ոգեշունչ քարոզն է խոսում՝ վեր հանելով սուրբ մեռոնի հոգևոր խորհուրդն ու իմաստը մեր ազգային գիտակցության մեջ:

Կարդացվում է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանը



Ուխտացող Հայոց Վեհարանում Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Ամենայն Տաճճ Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսը, Մեծի Տաճճ Վեհարանում, Գևորգեանց Ճեմարանի տեսչի ընկերակցութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Թորգոմ Դիւանի անդամներ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա.-Ի ԽՕՍՔԸ ՄԻՍՈՒՆՕՐՀՆՈՒԹԵԱՆ-ԱՌԹԻՒ (29 Սեպտեմբեր 1991 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ». ամէն:
«Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա»:
Սիրեցեալ հոգեւոր զաւակներ Մեր,

Այսօր, երբ Սուրբ Էջմիածնի կամարների տակ հաւաքուած, օրհնեցինք սրբալոյս միւռոնը, յիշենք որ շատ դարեր առաջ Սուրբն Գրիգոր՝ մեր Լուսաւորչի հրաշք տեսիլքով, իջաւ այստեղ Որդին Աստուծոյ, Փրկիչն մեր Քրիստոս և նրա հետ՝ նաև լոյսը փառքի:

Այդպէս է, որ Հայաստանում հռչակուեց քրիստոնէական հաւատքը իբրև պաշտօնական կրոնը համայն հայ ազգի, որի ծոցում, դեռևս առաքելական դարից, սկսել էր տարածուել սուրբ Աւետարանի աստուածային խօսքը: Բայց մանաւանդ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի քարոզչութեամբ ու հրաշալի գործունէութեամբ, և հայոց Տրդատ թագաւորի դարձով ու մկրտութեամբ, նոր հաւատքը վերջնապէս յաղթանակեց, և հիմքը դրուեց ու կազմակերպուեց Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, կենտրոն ունենալով հենց այս տեղը, ուր իջել էր Միածին Որդին Աստուծոյ:

Այդ օրուանից հայ ժողովրդի հոգու աշխարհը սկսեց շաղախուել Քրիստոսի Աւետարանի լոյսով:

Այդ օրուանից հայ ժողովուրդը սկսեց ապրել հոգեւոր նոր վերածնունդ:

Այդ օրուանից հայ ժողովուրդը սկսեց պայծառակերպուել և դառնալ ստեղծարար ազգութիւն:

Վկայ է պատմութիւնը, որ քրիստոնէութեամբ հայ ազգը դարձաւ համաշխարհային երևոյթ:

Այո՛, համաշխարհային երևոյթ, նախ՝ որովհետև նա առաջինը հանդիսացաւ, որ 301 թուականին իր սիրտը բացեց Քրիստոսի Աւետարանի լոյսին ու նոր հաւատքը հռչակեց ազգային պետական կրոն, իսկ հայոց Տրդատ արքան, եղաւ առաջին թագաւորը, որը մկրտուեց քրիստոնեայ:

Ինչպէս յայտնի է, 313 թուականին Հռոմի կայսրը՝ Կոստանդիանոս, Միլանի հրովարտակով քրիստոնէութիւնը հռչակեց լոկ արտօնեալ կրոն Հռոմէական կայսրութեան տարածքի վրայ և ինքը մկրտուեց շուրջ տասը տարի յետոյ միայն:

Հայ ժողովուրդը, քրիստոնէութեամբ, դարձաւ համաշխարհային երևոյթ նաև իր հինգերորդ դարի Ոսկեդարով, երբ աշխարհում կազմաւորուեց ու ճառագայթեց մի նոր մշակոյթ, մի ազգային ինքնատիպ նոր ոգեկանութիւն, որի ստեղծած արժէքները իրենց մնայուն տեղն են գրաւել միջազգային քաղաքակրթութեան պատմութեան մէջ մինչև մեր օրերը:

Եւ վերջապէս հայ ժողովուրդը, քրիստոնէութեամբ դարձաւ համաշխարհային երևոյթ նաև Վարդանանց պատերազմով, որ աշխարհի պատմութեան հորիզոնի վրայ հանդիսացաւ առաջին պատերազմը վասն խղճի, վասն հաւատի ազատութեան: Վարդանանց նահատակութիւնը հայոց պատմութեան մէջ մնաց մինչև մեր օրերը, խորհրդանիշը մեր ազգի ազատատենչ ոգու, մեր ազգի անկախութեան տենչի:

Այս օրերին, երբ մեր մայր հայրենիքը հռչակել է իր պետական ան-

կախութիւնը, Հայ Առաքելական Եկեղեցին բարձրաղաղակ ողջունում է այդ հռչակումը, այն գիտակցութեամբ, որ ինքը՝ Հայ Եկեղեցին, իր սկզբնաւորման ժամանակներից մինչև մեր ժամանակները պահել-պահպանել է անկախութեան գաղափարը, հոգևոր կեանքի մակարդակի վրայ: Դարեր շարունակ բռնատէրերի լծի տակ հայ հաւատացեալը ինքն իրեն զգացել է ազատ ու անկախ միայն իր մայր Եկեղեցու կամարների ներքոյ:

Արդար է հետևաբար, որ Հայ Եկեղեցին ճանաչուի նախավկան, նախակարապետը մերօրեայ պետական անկախութեան:

Հայ Եկեղեցին, ինքնիշխանութեան ու անկախութեան գաղափարը իրականացրել է դարեր շարունակ նաև այլ Եկեղեցիների հետ իր յարաբերութիւնների ճանապարհին:

Քրիստոնեայ մեծ Եկեղեցիներ, Բիւզանդական շրջանից սկսած, յաճախ ձգտել են իշխել Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի հոգու վրայ ու խափանել նրա ազգային ոգեկանութեան անկախութիւնը: Այդ տեսակետից Հայ Եկեղեցու պատմութիւնը մի հերոսամարտ է՝ ընդդէմ նման օտար Եկեղեցիների նուաճողական ձգտումների:

Հայ Առաքելական Եկեղեցին այսօր էլ եղբայրական սիրալիր յարաբերութիւններ է կամենում պահել բոլոր քրիստոնեայ քոյր Եկեղեցիների հետ, էկումենիկ ոգով, սրբութեամբ պահպանելով սակայն իր դաւանանքը և իր ներքին վարչա-կազմակերպչական ազգային անկախութիւնը: Հայ ժողովուրդը երբեք պիտի չկամենայ կախման մէջ լինել այլ եկեղեցական կենտրոններից: Եւ երբեք պիտի չհանդուրժի, որ այլ Եկեղեցիներ մարդորսութեամբ զբաղուեն մեր ազգի ծոցում՝ Հայաստանում թէ սփիւռքում:

Հայ Առաքելական Եկեղեցին հնագոյն վաւերական քրիստոնէական Եկեղեցիներից մէկն է և կարիքը չունի դրսից կրօնական-եկեղեցական ուսմունք ներմուծելու:

Այսօր, մեր անկախ պետութեան հռչակումով, այժմէութիւն է ստանում նաև հայ ազգի Եկեղեցու հոգևոր անկախութեան ամրապնդման հրամայականը, իբրև հայ ժողովրդի միակ հարազատ Եկեղեցին, անկախ օտար կրօնական կենտրոններից:

Մեր նոր ինքնիշխան պետութեան անկախութեան հիմքերից մէկն է նաև հայ ազգի Եկեղեցու անկախութիւնը և ինքնիշխանութիւնը:

Մենք դաւանում ենք Հաւատամքը՝ մէկ ազատ ազգութիւն,
մէկ անկախ պետութիւն,
մէկ անկախ ազգային Եկեղեցի:

Այս հաւատամքով, այս գիտակցութեամբ, Սուրբ Հոգու զօրութեամբ օրհնուած այս սրբալոյս միւռոնը Մենք հռչակում ենք անկախութեան միւռոն:

Հայեր, հոգևոր զաւակներ Մեր, այս սրբազան միւռոնով՝ միացէ՛ք, եղբայրացէ՛ք, եղէք մէ՛կ կամք, եղէք մէ՛կ ուրախութիւն, եղէք մէ՛կ ցաւ: Եղէք մէ՛կ ազգ, մէ՛կ ընտանիք, մէ՛կ ժայռացած երդում և հաւատացէք մեր այս մի բուռ հայրենի հողին ու նրա գալիքին, սուրբգրական Արարատի հայեացքի տակ, Սուրբ Էջմիածնի օրհնութեան ներքոյ:

«Քանզի ո՞վ է մեր յոյս, կամ խնդութիւն կամ պսակ պարծանաց մերոց, եթէ ոչ դուք ժողովուրդ մեր, առաջի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի նորա գալստեանն: Զի դուք էք փառք մեր և խնդութիւն» (Ա. Թեսաղ. Բ. 19—20): Այժմ և միշտ. ամէն:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Սրբալույս մեռոնի օրհնության արարողության ավարտից հետո, Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թափորով, «Հայրապետական օրհներգի» վեհաշունչ երգեցողության ներքո, առաջնորդվում է Վեհարան՝ օրվա տոնի առթիվ ընդունելու շնորհավորություններ: Այս առիթով Վեհարանի սեղանատանը տրվում է պաշտոնական ճաշկերույթ, որին մասնակցում են Հայաստանի խորհրդարանի նախագահ Տիար Լևոն Տեր-Պետրոսյանը, պաշտոնական այլ անձինք, քույր Եկեղեցիների պատգամավորներ և ուխտավորներ:

ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՂՈԹՔ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ

Սեպտեմբերի 30-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Ամենայն Հայոց Վազգեն Ա Կաթողիկոսի գլխավորությամբ, Հայ Եկեղեցու պատգամավորները, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներն ու հյուրերը, ծաղիկներով ու ծաղկեպսակներով այցելում են Ծիծեռնակաբերդի հայ նահատակաց հուշարձան:

Նահատակաց հուշարձանի հավերժական կրակի շուրջ բոլորված, Հայ և քույր Եկեղեցիների հոգևոր դասը միասնաբար աղոթում են անմեղ նահատակ հայորդիների հոգիների խաղաղության և հանգստյան համար:

Նույն օրը, ժամը 12-ին, Հայ Եկեղեցու հոգևորականաց դասին և քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին ընդունեց Հայաստանի Խորհրդարանի նախագահ Տիար Լևոն Տեր-Պետրոսյանը: Նա մեկ անգամ ևս շնորհավորեց Վեհափառ Հայրապետին մեռոնօրհնության առիթով և, բարձր գնահատելով Հայ Եկեղեցու և հոգևորականության դերը մեր ժողովրդի կյանքում, ողջունեց նրա վերազարթոնքի նոր ուղին:

Երեկոյան ժամը 19.30-ին Արամ Խաչատրյանի անվան համերգային սրահում Արարատյան հայրապետական թեմի «Մանկունք» երգչախմբի և Մայր տաճարի երգեցիկ խմբի կատարմամբ տոնական համերգ կազմակերպվեց, որին իրենց օրհնությունն էին բերել Ամենայն Հայոց Հայրապետը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, մեր նվիրապետական մյուս Աթոռների պետերն ու ներկայացուցիչները, թեմական առաջնորդները և քույր Եկեղեցիների պատգամավորները:

Հոկտեմբերի 1-ին Վեհարանում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ եպիսկոպոսաց խորհրդակցական ժողով, որտեղ քննարկվեցին մեր Եկեղեցուն և ժողովրդին հուզող տարբեր հարցեր:

Մայր Աթոռ ժամանած հյուրերը հոկտեմբերի 2-ին, հրաժեշտ տալով Ամենայն Հայոց Կաթողիկոսին և շնորհակալություն հայտնելով նրա ջերմ ու հոգատար վերաբերմունքի համար, մեկնում են անմոռաց տպավորություններով:

Մայր Աթոռում գտնվելու շրջանում հյուրերն այցելեցին հանրապետության տեսարժան վայրերը, եղան Գառնիի տաճարում, Ս. Գեղարդա վանքում, Խորվիրապում, Սևանում, այցելեցին թանգարաններ և մշակութային

կենտրոններ, ծանոթացան ինքնիշխան Հայաստանի դժվարություններին և նոր նվաճումներին:

Բոլոր պատգամավորներն ու հյուրերը կարոտակեզ շրթներով համբուրեցին մեր սուրբ վանքերի խնկաբույր քարերը, հոգևոր շունչ ու ջերմություն ստացան հայոց սրբազան հողից և հայրենի աշխարհից հեռացան ապագայի լուսավոր ու գեղեցիկ տեսիլքներով: